

Ռեկտոր Հովհաննես Թորմաջյանի հաշվետվությունը 2016 թվականին «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի կատարած աշխատանքների վերաբերյալ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը լսում է հոգաբարձուների խորհուրդը՝ Համալսարանի կանոնադրության 32-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջով:

2016/2017 ուսումնական տարում Համալսարան է ընդունվել 301 դիմորդ, որից մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգ՝ 50, հեռակա՝ 1, բակալավրի առկա ուսուցման համակարգ՝ 89, հեռակա ուսուցման համակարգ՝ 71, միջին մասնագիտական համակարգ 90 դիմորդ:

Ընդունելությունը, համաձայն համապատասխան կարգի պահանջների, իրականացվել է երկու փուլով:

Սագիստրատուրա առաջին փուլով անվճար ուսուցման համակարգ ընդունվել են 20 դիմորդ 11 մասնագիտությունով, իսկ երկրորդ փուլով ընդունվել են 30 դիմորդ, որից 5-ը՝ պահուստային տեղերի հաշվին ընդունվել են անվճար հիմունքներով:

Բակալավրի առաջին փուլով ընդունվել են 55 դիմորդ 14 մասնագիտություններով, որից 21-ը անվճար, 34-ը՝ վճարովի հիմունքներով:

Բակալավրի երկրորդ փուլով ընդունվել են 34 դիմորդ, որից 1-ը՝ անվճար:

Բակալավրի հեռակա ուսուցման համակարգ ընդունվել են 71 դիմորդ՝ 6 մասնագիտություններով:

Միջին մասնագիտական կրթությամբ անվճար ուսուցման համակարգ ընդունվել են 90 դիմորդ՝ 6 մասնագիտություններով:

Արցախի պետական համալսարանից տեղափոխվել և համալսարանում ուսումը շարունակում են 157 ուսանող, որից՝ 10 մագիստրանտ, բակալավրի առկա ուսուցման համակարգի՝ 51 ուսանող և հեռակայի՝ 96 ուսանող:

Հաշվետու ժամանակահատվածում ժամկետային գինձառայության են մեկնել բակալավրի առկա ուսուցման համակարգի 19 ուսանող, որից 2-ը անվճար, իսկ հեռակա ուսուցման համակարգից՝ 5 ուսանող:

Ուսանողության համակազմում վերականգնվել են բակալավրի առկա ուսուցման համակարգում 5, հեռակայում՝ 7 ուսանող:

2015/2016 ուստարվա առաջադիմության արդյունքներով շրջափոխման են ենթարկվել 4 մագիստրանտ և 6 ուսանող:

Ուսման վճարի գեղչ է կատարվել 5 ուսանողների համար, հաշվի առնելով նրանց բարձր առաջադիմությունը և ծանր սոցիալական պայմանները:

2016/2017 ուսումնական տարում համալսարանի սոցիալում ընդգրկվել են 2 ուսանող և 7 մագիստրանտ:

2016/2017 սպաների զավակների ցուցակում ընդգրկված են 13 ուսանող:

Ընթացիկ տարվա հոկտեմբերից՝ դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում երեք ակադեմիական խմբերի ուսանողների ուսումնական գործընթացը մի մասը կազմակերպվել է ՀՀ ք.Երևանում՝ ⑥Օգտակար հանածոների հետախուզում և մշակում⑦3-րդ կուրս, ⑥Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ⑦1-ին կուրս, ⑥Ճարտարապետություն⑦1-ին կուրս:

Ուսումնական տարվա սկզբից ազատվել են ուսանողության համակազմից իրենց դիմումների համաձայն՝ այլ բնակության վայր տեղափոխվելու պատճառով 13 ուսանող:

2016թ. դեկտեմբերի 19-ի դրությամբ համալսարանի ուսանողների թիվը կազմում է 420, որից միջին մասնագիտական ուսուցմամբ 88, բակալավրում՝ 273, մագիստրատուրայում՝ 59:

Հետրուհական ուսուցման համակարգում 24 հայցորդներ են ընդգրկվել տարբեր մասնագիտություններով, որոնց համար դասընթացները կազմակերպվել են ս.թ դեկտեմբերի 05-ից:

Համալսարանի «Զրային համակարգերի շինարարություն և շահագործում» մասնագիտության մագիստրանտ Աշոտ Բալայանը ս.թ դեկտեմբերի 6-ից 10-ը գործուղվել է Լեհաստան «Չեստոխովայի տեխնոլոգիական համալսարան» գիտաժողովին մասնակցելու նպատակով: Համալսարանի «Հումանիտար և լեզուների» ամբիոնի ռուսաց լեզվի 5 մասնագետներ դեկտեմբերի 12-ից 16-ը գործուղվել են Երևան՝ գիտության և մշակույթի ռուսական կենտրոն, որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցելու նպատակով, արդյունքում ստացել համապատասխան սերտիֆիկատներ:

Համալսարանի ձևավորված երեք ֆակուլտետների 8 ամբիոններում բոլոր մասնագիտությունների բոլոր ուսուցման համակարգերում ընդհանուր ծանրաբեռնվածությունն ըստ ամբիոնների կազմել է.

Քաղաքաշինություն – 13355 ժամ, Տեղեկատվական – 16200 ժամ, Հումանիտար – 11725 ժամ, Էկոնոմիկա – 1635 ժամ, Անասնաբուժություն – 1002 ժամ, Ագրոնոմիա – 2047 ժամ, Գյուղ. մեքենայացում – 1304 ժամ, Ճարտարապետություն – 1126 ժամ: Ընդամենը – 48394 ժամ:

Համալսարանում 2016թ. սեպտեմբերի 1-ից աշխատանքի են ընդունվել 163 դասախոս, որոնց հետ կնքվել են համապատասխան աշխատանքային պայմանագրեր՝ մեկ տարի ժամկետով:

Վարչական աշխատողների թիվը կազմում է 30 հոգի:

Տնտեսական մասի աշխատողների թիվը կազմում է 37 հոգի:

Հիմնական հաստիքային դասավանդող դասախոսների թիվը կազմում է - 96 դասախոս, որից՝ 20 - ը՝ 1.0 դրույքով, 33 - ը՝ 0.5 դրույքով, 18 - ը՝ 0.25 դրույքով, 25 - ը՝ ժամավճարային հիմունքներով

Համալսարանում դասախոսում են ներքոհիշյալ գիտական կոչումներով և տարակարգերով դասախոսներ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր – 10, գիտության դոկտոր, դոցենտ - 1, գիտության թեկնածու, դոցենտ - 17, գիտության թեկնածու, ավագ դասախոս - 9, գիտության թեկնածու, ասիստենտ - 4, ավագ դասախոս - 15, ասիստենտ - 31, դասախոս - 20

Համալսարանի խորհուրդներում և փորձուսուցման գործընթացներում ներգրավված են ևս գիտությունների 3 դոկտորներ՝ Ալեքսանյան Վալերի - 055 մասնագիտական խորհրդի անդամ, Ղազարյան Էդուարդ – սլավոնական համալսարանից, Սարգսյան Հայկ - սլավոնական համալսարանից:

Մշակվել և համալսարանի գիտխորհուրդի կողմից հաստատվել են հետևյալ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) թվով 58 ուսումնական պլանները.

1.Միջին մասնագիտական կրթական ծրագիր

1.1. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ.

1.2. Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում.

1.3. Ներքին ջեռուցման և օդափոխման համակարգերի սանիտարատեխնիկական սարքավորումների և օդափոխման համակարգերի տեղակայում և շահագործում.

1.4. Քաղաքաշինական կադաստր.

1.5. Գյուղատնտեսագիտություն.

1.6. Անասնաբուժություն.

1.7 Գյուղատնտեսության մեքենայացում:

2. Բակալավր

2.1. Բակալավր (առկա)`

2.1.1. Ագրոքիզնես.

2.1.2. Համակարգչային ճարտարագիտություն.

2.1.3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ.

2.1.4. Էլեկտրաէներգետիկա.

2.1.5. Ռադիոտեխնիկա և կապ.

2.1.6. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում.

2.1.7. Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ.

2.1.8. Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում.

2.1.9. Ճարտարապետություն.

2.1.10. Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն.

2.1.11. Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում.

2.1.12. Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում.

2.1.13. Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա.

2.1.14. Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա.

2.1.15. Անասնաբուժություն.

2.1.16. Պարենամթերքի տեխնոլոգիա.

2.1.17. Քաղաքային տնտեսություն.

2.1.18. Դիզայն:

2.2.Բակալավր (հեռակա)`

2.2.1.Ագրոքիզնես.

2.2.2. Համակարգչային ճարտարագիտություն.

2.2.3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ.

2.2.4. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում.

2.2.5. Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ.

2.2.6. Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն.

2.2.7. Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա:

3. Մագիստրատուրա

3.1. Մագիստրատուրա(առկա)`

3.2. Ագրոքիզնես.

3.3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ.

3.4. Էլեկտրաէներգետիկա.

3.5. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում.

3.6. Գյուղատնտեսության մեքենայացում.

3.7. Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն.

3.8. Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն.

3.9. Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում.

3.10. Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում.

3.11. Ագրոնոմիա.

3.12. Անասնաբուժություն.

3.13. Պարենամթերքի տեխնոլոգիա.

3.14. Քաղաքային տնտեսություն.

3.15. Դիզայն:

3.2. Մագիստրատուրա (հեռակա)

3.2.1. Ագրոքիզնես.

3.2.2. Տեղեկատվական տեխնոլոգիաներ.

3.2.3. Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում.

3.2.4. Գյուղատնտեսության մեքենայացում.

3.2.5. Ճարտարապետություն.

3.2.6. Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն.

3.2.7. Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն.

3.2.8. Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում.

3.2.9. Ագրոնոմիա:

4. Հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանի ուսումնական գործընթացի պլան առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար:

ԼՂՀ կառավարությունը հաստատել է Համալսարանի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության հայտը՝ բակալավր առկա՝ 14 կրթական ծրագիր, բակալավր հեռակա՝ 6 կրթական ծրագիր, միջին մասնագիտական մասնագիտություններով՝ 7 կրթական ծրագիր:

Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատել են հետևյալ կարգերը.

1. Համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ.

2. Համալսարանում կրեդիտային համակարգով ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ.

3. Համալսարանի հոգաբարձուների խորհրդում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից անդամների ընտրության ընթացակարգ.

4. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ.

5. «Գծագրություն» առարկայից «Ճարտարապետություն» մասնագիտության ընդունելության քննության գնահատման կարգ.

6. «Նկարչություն» առարկայից «Ճարտարապետություն» մասնագիտության ընդունելության քննության գնահատման կարգ.

7. Համալսարանում աշխատավարձի վարձատրության չափի սահմանման կարգ.

8. Համալսարանի ֆակուլտետի գործունեության կարգ.

9. Համալսարանի ամբիոնների գործունեության կարգ.

10. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու կարգ.

11. Համալսարանի ուսումնառության առկա համակարգում մագիստրոսական թեզերի առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության կարգ.

12. Համալսարանի բակալավրի ընդունելության կարգ.

13. Համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության կարգ.

14. Համալսարանի մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի ընդունելության կարգ.

15. Համալսարանի բակալավրի ավարտական աշխատանքների առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության կարգ.

16. Համալսարանի ուսանողների ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցում տրամադրելու կարգ.

17. Համալսարանի ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության կարգ.

18. Համալսարանում կրեդիտային համակարգով հետքուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման կարգ.

19. Համալսարանում ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կարգ:

Հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանը անց է կացրել բակալավրի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում 208 միջանկյալ քննություն և 155 ստուգարք, բակալավրի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում 57 քննություն և 37 ստուգարք: Միջին մասնագիտական կրթական ծրագրերի համակարգում անց է կացվել 56 ստուգարք: 2017թ. հունվար ամսին բոլոր ուսուցման համակարգերում ծրագրվում է անցկացնել 180 քննություն, 57 ստուգարք:

Ընթացքի մեջ է Համալսարանի մասնագիտությունների առարկայական ծրագրերի արդիականացման գործընթացը, 2016թ. կատարվել է աշխատանքի մոտ 30%-ը:

Համալսարանում անց են կացվել դասալսումներ բոլոր ֆակուլտետներում, գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Համալսարանի ղեկավարության և ընդունող հանձնաժողովի կողմից անց են կացվել հանդիպումներ ԼՂՀ 16 դպրոցների ավարտական դասարանների աշակերտների և ուսուցչական կոլեկտիվների հետ:

Կազմակերպական փուլում է Համալսարանում ռազմական ամբիոնի ստեղծման հարցը: Մշակվել է նշված ամբիոնի գործունեության կարգի նախագծի առաջին տարբերակը, որը քննարկվել է Համալսարանի գիտական խորհրդում:

Համալսարանը դարձել է շինարարական բուհերի միջազգային ասոցիացիայի անդամ, համագործակցության շրջանակային պայմանագրեր է կնքել Կազանի ճարտարապետաշինարարական համալսարանի և Իվանովոյի պոլիտեխնիկական համալսարանի հետ:

Համալսարանը կնքել է նաև համագործակցության 15 պայմանագիր հետևյալ կազմակերպությունների հետ`

1. ՀՀ փորձագիտական բյուրո.
2. ԼՂՀ Գյուղատնտեսության նախարարություն.
3. ԼՂՀ Քաղաքաշինության նախարարություն.
4. ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն.
5. ԼՂՀ առողջապահության նախարարության «համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ.
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ.
7. ԼՂՀ «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ» .
8. «ՊԱՆՏ» ՍՊԸ.
9. Ապագա սերունդների հիմնադրամ.
10. «Վիրաժ ԱԿ».

11. «Վեմ» ՍՊԸ.
12. Ասկերանի շրջանի Խանապատի տոհմային կայան ՓԲԸ.
13. Էներգետիկայի ԳՀԻ ՓԲԸ.
14. ԼՂՀ հանրապետական անասնաբուժական լաբորատորիա.
15. «Շին - Վեր» ՍՊԸ.
16. «Սամսոն Հովհաննիսյան» ԱԶ:

2016թ. ընթացքում Համալսարանի ֆինանսատնտեսական մասի կողմից կատարվել են.

- 2017թ. նախահաշվի կազմում և ներկայացում ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն ընդունելության մասով՝ ուսանողներից ստացված գումարների մուտքագրում, հաշվարկ, ամփոփում և հանձնաժողովի անդամներին աշխատավարձի վճարում.
- Ամսական հայտերի կազմում և ներկայացում ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն և ԼՂՀ ֆինանսների նախարարություն.
- Աշխատողների աշխատավարձի հաշվարկ և աշխատավարձի փոխանցումներ աշխատողների բանկային քարտերին, ստացված հաշիվապրանքագրերի մուտքագրում, վճարային հանձնարարագրերի պատրաստում և փոխանցում.
- Տեղերի պատրաստում, տեղերների հետ կապված հանձնաժողովի նիստերի գրանցում, գնումների կայքում տեղադրում և պայմանագրերի կնքում՝ մրցույթում հաղթած մասնակիցների հետ աշխատանքային պայմանագրերի կնքում.
- Եռամսյակային հաշվետվությունների ներկայացում հարկային մարմին, ֆինանսների նախարարություն, Եկամտային հարկի մասով ամսական հայտի և հաշվետվության ներկայացում հարկային մարմին, նյութական արժեքների գրանցում, շրջանառության գրքի վարում:

Հաշվետու տարում կազմակերպվել է.

1. ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ_16 /1 ծածկագրով գնման ընթացակարգ՝ բենզինի ձեռքբերման նպատակով:
2. ՇՏՀ-ՊԸԱՊԶԲ-16/1 ծածկագրով գնման ընթացակարգ լաբորատոր սարքավորումների լրակազմի և եթերայուղերի ու բուսայուղերի ստացման փորձարարական սարքավորումների լրակազմի ձեռքբերման նպատակով:
3. ՇՏՀ- ՇՀԱՊԶԲ-16/2 ծածկագրով գնման ընթացակարգ համակարգիչների ձեռքբերման նպատակով:
4. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/3» ծածկագրով գնման ընթացակարգ, գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով:
5. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/3 -1» գրենական պիտույքների և նյութերի գնման պայմանագրի գնման թույլտվություն:
6. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/3 -2» գրենական պիտույքների և նյութերի գնման պայմանագրի «Անգելինա Հայրյան» ԱԶ-ն ստացել է 65555 դրամ գումարի գնման թույլտվություն:
7. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/4» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարթրիջների և տոներների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգ և այլն:
8. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/5» ծածկագրով գնման ընթացակարգ, էլեկտրոտեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային տեխնիկա ձեռքբերման նպատակով համաձայնագիր:
9. «ՇՏՀ-ՇՀԱՊԶԲ-16/8» ծածկագրով գնման ընթացակարգ, համակարգչային և պատճենահանման սարքավորումների, օժանդակ նյութերի, քարթրիջների և տոներների ձեռքբերման նպատակով:

ԼԴՀԼ ՀՀ ԿԳ-ների կողմից նվիրաբերած 11 նոութբուքներով ստեղծվել է համակարգչային կաթինետ: Համալսարանի դահլիճը կահավորել է ուսուցման ինտերակտիվ համակարգով:

Ստեղծվել է բնական տեխնոլոգիաների լաբորատորիա քիմիական լաբորատոր սարքավորումների և էթերայուղերի ու բուսայուղերի ստացման փորձարարական սարքավորումների լրակազմերի տեղադրմամբ:

Համալսարանը համագործակցել է տարբեր համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համալսարանի ուսանողների ու պրոֆեսորադասախոսական կազմի հանդիպումների կազմակերպմամբ:

Դրանցից են.

1. Հայ ազգագրագետ, պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, արդիականության ազգաբանության բաժնի վարիչ, տարբեր արտասահմանյան ԲՈՒՀ-երի պատվավոր դոկտոր, բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ, արտասահմանում պահանջված հայ գիտնական՝ Լևոն Հմայակի Աբրահամյանը:
2. Հայ գործարար՝ Վահան Ծաքարյանը, ով իր ուղին սկսել է ԱՄՆ-ում: 1998թ. հիմնելով MINNO բարձրորակ ու մատչելի արտադրող TSD /Թեքնոլոջի ընդ Մայնս Դայնամիքս/ ընկերությունը, նա տեղափոխվել է EDEC կորպորացիայի դատահետաքննչական գիտահետազոտական կենտրոնը: 2013թ. վերադարձել է Երևան և հիմնել «Արմթաթեքնոլոջի» ընկերությունը: Նույն թվականին ընկերությունը նախաձեռնել է Armtab պլանշետների և Armphone հեռախոսների արտադրությունը և այսօր արդեն հասցրել է ճանաչված բրենդ համարվել դյուրակիր համակարգիչների տարածաշրջանային շուկայում:
3. Վահե Այվազյանը՝ որը համարվում է առաջատար սփիքեր և բիզնեսթեյնր վաճառքի, կառավարման, գործարար բանակցությունների, անձնական հաջողությունների և մոտիվացիոն ուղղություններում: «Ayvazyan&Partners» ընկերությունը հիմնադրվել է 2011թ. Նոյեմբերին, որը հայկական հիմքեր ունեցող ընկերություն է՝ առաջին հերթին հայ բիզնեսի զարգացմանն ուղղված առաքելությամբ: Նա հանդես է եկել «Ինչպես ստեղծել բիզնես» թեմայով դասախոսությամբ:
4. Հասարակաբանական գիտությունների դոկտոր պարոն Հրաչ Զիլինգարյանը, ով ծնվել է Բեյրութում, համալսարանական կրթությունը ստացել Նյու Յորքում, Լոս Անջելեսում և Լոնդոնում, իսկ դոկտորական կոչումը ստացել է Լոնդոնի տնտեսագիտության ու քաղաքագիտության համալսարանում: Տաս տարի պաշտոնավարել է Քեմբրիջի համալսարանում և 2012թվականից Օքսֆորդ համալսարանի Արևելագիտության բաժնի արևելքի քրիստոնեության և հայագիտական ուսմունքների դասախոս է: Ունի բազմաթիվ ուսումնասիրություններ և հոդվածներ՝ Հայ եկեղեցու, Միջին Արևելքի հայ համայնքների, հարավային Կովկասի ու Ղարաբաղի հիմնախնդիրների և վերջին տարիներին Միջին Արևելքի տագնապների մասին: Նա հանդես է եկել «Կրոնական ծայրահեղականության, ռազմական հիմնախնդիրներ և Մերձավոր Արևելքի քրիստոնյա համայնքները» թեմայով դասախոսությամբ:
5. Պրոֆեսոր Պերճ Բերբերյանը (Բերբերօղլու)՝ ով սոցիոլոգիայի հիմնադրամի և ավարտական հետազոտությունների վարչության տնօրեն է ՌենոյիՍեվադա համալսարանում: Դոկտորական կոչումը ստացել է ԱՄՆ-ի Օրեգոնի համալսարանի կողմից 1977թ.-ին: Նա դասավանդել և հետազոտություններ է իրականացրել Ռենո քաղաքի Սեվադա համալսարանում: Նրա մասնագիտացման ոլորտները ներառում

են գլոբալացումը, քաղաքականանումը, գարգացումը, դասայինվերլուծությունը, քաղաքական, սոցիոլոգիազգայնականություն և էթնոագգային հակամարտությունը: Պրոֆեսոր Բերբերյանը (Բերբերոյլու) գրել ու խմբագրել է շուրջ 30 գրքեր և բազմաթիվ հոդվածներ:

6. Կազմակերպվել ենք դասընթաց «ԹԵՔՆՈԼՈԳԻ ԸՆԴ ՄԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ» (TSD) ընկերության և «ՆՅՈՒ ԹԵՔՆՈԼՈԳԻ ԷԴՈՒՔԵՅՇՆ ՖՈՆԴ» (NTEF) բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ: «Թեքնոլոջի Ընդ Սայնս Դայնամիքս» ընկերությունը և «Նյու Թեքնոլոջի Էդուքեյշն Ֆոնդ» բարեգործական հիմնադրամը ԼԴՀ կառավարության կողմից աջակցություն ստանալով ու համագործակցելով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հետ, հայտարարում են StartUp Challenge for Artsakh նորարական բիզնես-գաղափարների մրցույթ-ակսելերացիոն ծրագիր: Նմանատիպ ծրագրեր Հայաստանում բազմիցս իրականացվել են, իսկ Արցախում այս ծրագիրն առաջին անգամ է կազմակերպվում, որն իրենից ներկայացնում է բիզնես գաղափարների զարգացմանն ուղղված ծրագիր: StartUp Challenge for Artsakh մրցույթ-ակսելերացիոն ծրագիրը փոքր թիմի գաղափարի իրագործումն է, որը կխթանի Արցախի տնտեսության զարգացմանը: Դասընթացի ժամանակ ուսանողները հնարավորություն ունեցան ձեռք բերել գիտելիքներ բիզնեսի ոլորտում, թե ինչպես ձևավորել բիզնես մոդել և աշխատել բիզնես մոդելի շրջանակներում: StartUp Challenge for Artsakh ակսելերացիոն ծրագրի ընթացքում դիմորդները կմասնակցեն չորսշաբաթյա տևողության բիզնես-դասընթացների, որի ընթացքում ձեռք կբերեն բիզնես ոլորտի հետ կապված գիտելիքներ՝ ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ գիտելիքներ: Այս ծրագրի շնորհիվ Արցախում նույնպես կներդրվի StartUp-իմշակույթն, որն օգտակար կլինի Արցախի տնտեսության համար, քանի որ փոքր քայլերի միջոցով կկարողանանք

հասնել մեծ բարձունքների:

7. Համագործակցության շրջանակներում ակադեմիկոս Կ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտը Ծուշիի տեխնոլոգիական համալսարանին «Համատեղ գործունեության պայմանագրի» շրջանակներում 5 մետաղյա չիրկիզվող պահարան է նվիրել: Պահարանները կարգի են բերվել Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի աշակերտների կողմից: Ծուշիի տեխնոլոգիական համալսարանը պահարաններից մեկը նվիրել է Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանին, 4-ը՝ հանձնել համալսարանի ստորաբաժանումներին:

Համալսարանը ձեռք է բերել.

1. ՔՄՓ-953 լիցենզիան՝ բնակելի, քաղաքաշինության բնագավառում հասարակական և արտադրական ոլորտի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության համար:
2. ՈՏՀ-934 լիցենզիան՝ քաղաքաշինության բնագավառում հիդրոտեխնիկական ոլորտի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության համար:
3. ՔՓՄ-957 լիցենզիան՝ քաղաքաշինության բնագավառում հիդրոտեխնիկական ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության համար:
4. ՈՏՀ-958 լիցենզիան քաղաքաշինության բնագավառում Էներգետիկ ոլորտի շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության համար:

Համալսարանին, թիվ 143054 Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցմամբ, ԼՂՀ կառավարության առ 28.11.2016թ N 756-Ա որոշմամբ, նվիրաբերության պայմանագրով (N 248 /գրանցման N 413/, առ 09.12.2016թ., մակերեսի չափը 0.41448 հա: Հասցե ԼՂՀ ք. Ծուշի, Ա. Բեկորի փողոց, N 4), սեփականության իրավունքով հատկացվել է ուսումնական մասնաշենք:

Համալսարանը հաշվետու տարում իրականացրել է տեխնիկական հսկողության աշխատանքներ, որոնք են.

1. ԼՂՀ Սարտակետի շրջանի Գետավան համայնքի տարածքում Թարթառ գետից ձախափնյա ջրանցքի վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ԼՂՀ ԳՆ ԲԸԱՀԾԶԲ 16/2» պայմանագիրը,
2. ԼՂՀ Հաղորթի շրջանի Վարանդա գետի վրա կառուցված վթարված ջրամբարի վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ԼՂՀ ԳՆ ԲԸԱՀԾԶԲ 16/3» պայմանագիրը,
3. ԼՂՀ Սարտունու շրջանի Հաղորտի համայնքում խորքային հորի վերանորոգման և նոր ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ, ԼՂՀ Սարտունու շրջանի Մուշկապատ համայնքում խորքային հորի վերանորոգման և նոր ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ, ԼՂՀ Սարտունու շրջանի Գևորգավան տեղամասում նոր խորքային հորի հորատման և նոր ոռոգման համակարգի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ԼՂՀ ԳՆ ԳԸԾԶԲ 16/2» պայմանագիրը:

Համալսարանն իր միջոցներով սկսել է.

1. Համալսարանի սպորտ համալիրի նախագծման կազմակերպչական աշխատանքները:
2. Ուսումնափորձնական հողամասում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը, այդ թվում՝ գիտխորհրդի կողմից հաստատված «Նուռ» և «Ազնվամորի» ծրագրերի կազմակերպմանը և իրականացմանը:

Համալսարանը մասնակցություն է ունեցել Հայաստան Համահայկական հիմնադրամի կազմակերպած դրամահավաքին 552 651 դրամ չափով:

2016թ. սեպտեմբերի 1-ից՝

- կահավորվել է թվով 3 մասնագիտական համակարգչային լսարան և մեկ ուսումնագիտական լսարատորիս.

- բոլոր լսարաններում ստեղծվել են բավարար պայմաններ ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար.

- ուսումնական մասնաշենքերի և հանրակացարանում հակահրդեհային անվտանգությունն ապահովվելու համար ձեռք է բերվել և տեղադրվել է թվով 28 կրակմարիչ: Մշակվել է արտակարգ իրավիճակների դեպքում անձնակազմի անվտանգ տարահանման սխեման հաստատված համալսարանի ռեկտորի և արտակարգ իրավիճակների վարչության պետի կողմից, ինչպես նաև ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության կանոնակարգ, հասարակական կարգի ապահովման կանոնները և ներքին անվտանգության ապահովման և պահակային ծառայության ծառայողների գործառնության պարտականությունները՝ հայտնաբերված ահաբեկչական սպառնալիքների դեպքում

- ուսումնափորձնական հողամասում ձեռք են բերվել և տնկվել է թվով 7 հազար ազնվամորու տնկի, դրանց ձևավորման համար տեղադրվել է 380 հատ բետոնյա սյուն:

- 2016թ. սեպտեմբերի 5-ից մասնակիորեն գործում է հանրակացարանը, որը բաղկացած է 15 ննջասենյակից, որտեղ ապրում են նաև «Եզնիկ Սոցյան» արհեստագործական ուսումնարանի թվով 51 աշակերտ: Հանրակացարանում առկա է լվացքատուն, համակարգչային սենյակ և խոհանոց: Նոյեմբերի 18-ից շահագործման է հանձնվել նաև հանրակացարանի I-ին և V-րդ հարկերը, որտեղ ապրում են թվով 37 ուսանողներ, որոնցից 29-ը Համալսարանի ուսանողներ են, իսկ 8-ը` Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսանողները:

Համալսարանի գրադարանում 20.12.2016թ. դրությամբ առկա են (համատեղ ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ).

N/N	Գրականության տեսակը	Գրքերի քանակը		
		Ընդամենը	Հայերեն	Ռուսերեն
1	Գեղարվեստական	1948	1053	895
2	Մասնագիտական	12.965	6147	6818
3	Մեթոդական ցուցում.	1836	1836	-----
4	Դպրոցական դասագիրք	958	958	-----
5	Ընդամենը	17.707	9994	7713